Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 30 -ի N 879 - Ա
որոշման

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Աջակցություն 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին արցախյան պատերազմի հետևանքով տեղահանված, նյութական և հոգեբանական ծանր կացության մեջ հայտնված Արցախի Հանրապետության բնակչությանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Անհատ բարերարներից և ոչ առևտրային կազմակերպություններից ստացվող հանգանակություններ:
4.	Ծրագիրը կատարողը	«Նարեկացի» արվեստի միավորում» հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Վարդանանց 16/1, ՀՎՀՀ՝ 02553174):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	քաղ. Երևան, Վարդանանց 16/1, սոցիալական բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	150 մլն դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի հանրապետության տարհանված բնակչություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հունվարի 1-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Օգնություն արցախցիներին» նախաձեռնությամբ Արցախից տարհանված ընտանիքներին առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովում՝ վերմակ, ներքնակ, տաք հագուստ, կենցաղային ապրանքներ և պարագաներ, մանկական անհրաժեշտ պարագաներ և հագուստ:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Առաջին անհրաժեշտության և կենցաղային ապրանքների, հագուստի, անկողնային ու հիգիենիկ պարագաների ձեռքբերում՝ - լվացքի փոշի – 8,0 մլն դրամի չափով, - մանկական տակդիրներ – 12,0 մլն դրամի չափով, - վերմակներ – 15,0 մլն դրամի չափով, - բարձեր – 10,0 մլն դրամի չափով, - անկողնային պարագաներ (սավան, ծրար, բարձի երես) – 10,0 մլն դրամի չափով, - էլեկտրական սարքավորումներ (տաքացուցիչներ, ջեռուցիչներ) – 25,0 մլն դրամի չափով, - մեծահասակների վերարկուներ – 30,0 մլն դրամի չափով, - գլխարկներ, շարֆեր – 8,0 մլն դրամի չափով, - տաք վերնահագուստ – 18,0 մլն դրամի չափով: Նվերների ձեռքբերում – 14,0 մլն դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Տարածքային սոցիալական մարմիններ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ